Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-442[2]-25.11.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-207-Ն օրենքի 3-րդ հոդվածը լրացնել նոր՝ 8-րդ մասով.

«8. Նոր ստեղծվող պետական մարմնի, ենթակա պետական մարմնի կազմավորման առանձնահատկությունները սահմանվում են համապատասխան օրենքներով:»:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ մասով.

«6. Ոստիկանության պետը և Փրկարար ծառայության տնօրենը ի պաշտոնե պետական մարմնի ղեկավարի տեղակալներ են, ընդ որում՝ վերջիններիս պետական մարմնի ղեկավարի հրամանով չեն կարող վերապահվել առանձին բնագավառների, (այդ թվում՝ իրենց ղեկավարած ենթակա մարմնի գործունեությանը վերաբերող պետական մարմնի գործառույթներից բխող) գործառույթների և դրանք ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակա պետական մարմինների, կազմակերպությունների և հիմնարկների գործունեության համակարգումը, վերջիններս իրավունք չունեն փոխարինելու կամ այլ կերպ իրականացնելու պետական մարմնի ղեկավարին օրենքներով և/կամ սույն հոդվածով պետական մարմնի ղեկավարի տեղակալին վերապահված այլ լիազորություններ, ինչպես նաև ներկայացնել պետական մարմինը այլ պետական մարմինների և կազմակերպությունների հետ հարաբերություններում:»:

Հոդված 3. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր նախադասություն.

«Գործունեության դադարեցման գործընթացը սահմանվում է համապատասխան օրենքով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: